<< ԿԱՆԹԵՂ>> ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<Գնահատման նոր համակարգ>>

Կատարող՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N 1 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ Գայանե Հարությունյան

Ներածություն

Գնահատումը հասարակական կյանքի կարևորագույն խնդիրներից է, այն հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ կատարելագործելով գնահատման համակարգը՝ մենք խթանում ենք աշակերտների կողմից գիտելիքների, հմտությունների, վարքի և վարքագծի ձեռք բերման գործընթացը և նպաստում կրթության որակի բարելավմանը:

Ներկայացվող թեմայում մենք առանձնացրել ենք գնահատման համակարգին անչվող մի քանի հարցերի՝ այդ թվում գնահատման հիմնական սկզբունքներին, ձևերին և տեսակներին:

Մենք մեր հոդվածը կառուցել ենք այնպես, որ դասավանդման գործընթացի կատարելագործման հարցում գնահատման ավանդական և ժամանակակից տեսակները ներդաշնակենք միմյանց՝ դառնալով գնահատման նոր նախագծողներ: Հենց այս հարցի հետ կապված էլ հոդվածում ձևակերպել ենք ուսուցչի մի շարք որակներ, որոնք անհրաժեշտ են գնահատման ամբողջական համակարգը կիրառել այնպես, որ ավելանա սովորողների ակտիվությունը դասապրոցեսի ժամանակ: Առանց գնահատման սեփական մոտեցում մշակելու՝ յուրաքանչյուր առանձին մեթոդի մեխանիկական կիրառումը չի բերի ակնկալվող ընդհանուր նպատակին՝ աշակերտի ուսմանը խթանելուն և դասավանդումը կատարելագործելուն:

Գնահատման համակարգը, տեսակները և ուսուցչի մոտեցումները

Հոդվածում կներկայացնենք գնահատման համակարգի հետ կապված մի շարք հասկացություններ և գործառույթներ, որոնք կարևոր են ոչ միայն սոսկ գնահատումը որպես գործընթաց կիրառելու նպատակով, ոչ միայն ուղղակի թվանշան կամ ուսուցչի գործառույթ, այլ գնահատումը ընկալել որպես հասարակական հարաբերություններում ճիշտ կողմնորոշվելու միջոց, որպես իրականությունը ճանաչելու ուղի և պայման, որպես ինքնագնահատման ձև և անհրաժեշտություն, որպես կյանքի բոլոր բնագավառներին առնչվող խնդիր: Մանկավարժական և մեթոդական գրականության մեջ կան գնահատման բազմաթիվ սահմանումներ և մեկնաբանություններ, որոնք թերևս լրացնում են միմյանց : Օրինակ՝ 'գնահատումը որպես մանկավարժական միջոց, որը կիրառվում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման համար', կամ 'աշխատանքի, հասարակական կարծիքի, բարոյականության որոշակի չափանիշ', 'որպես դաստիարակության միջոց', 'Գնահատումը ենթադրում է ոչ միայն եզրափակիչ գնահատականի նշանակում, այլ շարունակական գործընթաց, որի նպատակը՝ արդյունավետ ուսուցումն է': 'Գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է': Վերջապես 'Գնահատումը սոցիալական իրականության տարբեր երևույթներին և մարդկանց արարքներին հավանություն տալը կամ դրանց դատապարտումն է' [1, էջ 74] և այլն:

Իսկ ի՞նչ է 'գնահատման նպատակ' հասկացությունը: Այն որպես ուսումնական գործընթաց ունի հետևյալ նպատակները.

- բարելավել հանրակրթության բովանդակային գործունեության արդյունքները,
- վերահսկել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման աստիճանը,
- չափել սովորողի ուսումնառության գործընթացները և արդյունքները,
- չափել ոչ միայն ուսումնառության, այլև ցանկացած գործունեության արդյունքները և վերագնահատել դրանք,
- ձևավորել, զարգացնել, վերահսկել սովորողների արժեքային որակները,

- բացահայտել յուրաքանչյուր սովորողի և ուսումնական հաստատության կողմից չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

2.

Ելնելով գնահատման վերոնշյալ նպատակներից՝ գնահատման համակարգը կարելի է բաժանել հետևյալ մասերի՝

ուսուցանող – ձևավորող և միավորային գնահատման

Ելնելով ուսուցանող – ձևավորող գնահատման նպատակից այն կարելի է իրականացնել գնահատման հետևյալ տեսակների միջոցով.

1. հայտորոշիչ (դիագնոստիկ) գնահատում,
2. ձևավորող գնահատում

Նկատի ունենալով ուսուցման արդիական առանձնահատկությունները՝ գնահատման համակարգը ենթադրում է ըստ փուլային գնահատման երեք տեսակի գնահատում: Մասնավորապես, առաջին փուլում կամ ուսումնառության սկզբում իրականացվում է հայտորոշիչ գնահատում, երկրորդ փուլում կամ ուսումնառության ընթացքում՝ ձևավորող, իսկ երրորդ փուլում՝ ամփոփիչ գնահատում:

Հայտորոշիչ կամ ախտորոշիչ գնահատման նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների նախնական մակարդակի բացահայտումն է՝ ինչը ենթադրում է սովորեցնողի հետագա գործողությունների պլանավորում, կանոնակարգում: Այսինքն, այստեղ նպատակը սովորողի առաջընթացը չափելն է: Եթե սովորողը չի հասնում սահմանված արդյունքին, ապա ուսուցիչը պետք է գնահատի ուսուցման մեթոդների արդյունավետությունը: Իսկ, եթե սովորողը հասնում է իր նպատակին, ապա նա կարող է կատարել հաջորդ քայլը: Նախնական գնահատումը բացահայտում է սովորողների պատրաստվածության աստիճանը, որն էլ օգնում է պլանավորել ուսուցման հետագա գործընթացը:

Ձևավորող գնահատման նպատակը կրթության բովանդակության յուրացումն է և ուսումնական գործընթացի բարելավումը: Այն անցկացվում է դասապրոցեսի ընթացքում: Ընթացիկ գնահատումով ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեթոդը (հունարեն Methodos՝ ճանաչողական կամ հետազոտական ճանապարհ, տեսությունմ ուսմունք բառից է), որը նշանակում է ինչ որ բանի ուղի: Սկզբնապես այն նշանակել է դեպի որևէ նպատակ տանող ուղի: Իսկ հետագայում իմաստափոխվելով գործածվել է իբրև բնության և հասարակական կյանքի երևույթների հետազոտման, ինչպես նաև գիտելիքների ուսուցման եղանակ:

«Ուսումնական մեթոդը դասավանդողի և ուսումնառողի կարգավորված փոխկապակցված գործունեության եղանակ է, գործունեության ճանապարհ՝ ուղղված ուսուցման գործընթացում դրված նպատակների իրականացման, խնդիրների լուծմանը» :

Մեթոդները ապահովում են արդյունքներին հասնելը: Դրանք ձևավորվում են՝ ելնելով նրանից, թե ուսուցման տվյալ հատվածի ելքում ուսումնառողները.

- ի՞նչ պետք է իմանան,
- ի՞նչ պետք է կարողանան,
- ի՞նչ արժևորել (մոտիվացիա, դիրքորոշում)

Հ. Պետրոսյանը նշում է, որ ուսուցման գործընթացի վերջում ստացված արդյունքները պետք է արժևորվեն և գնահատվեն ելակետային իրավիճակի հետ համեմատության միջոցով: Դա նշանակում է, որ որոշակի նշված չափանիշներին համապատասխան պետք է արժևորել և գնահատել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետություն: Քննարկենք գնահատման գործընթացի կազմակերպման մի քանի մեթոդներ, որոնք կնպաստեն ուսուցման գործընթացի բարելավման:

<< Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով սահմանել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները :

4.1 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.

հայտորոշիչ գնահատում
ձևավորող գնահատում
ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. *Հայտորոշիչ* գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ:
2. Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:
3. Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1.թեստ.
2.բանավոր հարցում.
3.բաց հարցերով քննարկում.
4.գործնական աշխատանք.
5.գրավոր աշխատանք և այլ ձևեր:

Նախնական հայտորոշիչ թեստի հիմնական հատկորոշիչները, որոնք կազմում են, այսպես կոչված, թեստի «անձնագիրը», որոշում են թեստի կառուցվանքն ու բովանդակությունը: Դրանք են՝
Ո՞ր դասարանի համար է նախատեսված:

Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:

Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:

Հատկացված ժամանակը

Կառաջադրանքի տիպը:

Նախնական հայտորոշիչ թեստի առանձնահատկություններն են՝

1. Ստուգում են սովորողների ընդհանրական /ֆոնային/ գիտելիքները ուսուցանվելիք թեմաներից:
2. Օգտագործվում են տարբեր տիպի առաջադրանքներ՝ փակ և բաց հարցերով՝ որոնք ենթադրում են մեկ ճիշտ պատասխանի կամ բազմակի ընտրության, լրացման, կարճ պատասխանով, կամ համապատասխանեցման առաջադրանքներ:
3. Հարցերը պետք է ձևակերպվեն կարճ, պարզ և մատչելի:
4. Բարդության աստիճանը պետք է լինի պարզից բարդ: Կարևոր է որոշել յուրաքանչյուր սովորողի, այդ թվում բարձր մտավոր ունակություններ դրսևորող սովորողի, գիտելիքների, հմտությունների մակարդակը, որպեսզի արդյունավետ կազմակերպվի յուրաքանչյուր սովորողի ուսուցման և ուսումնառության ընթացքը:
5. Տևողությունը հարաբերականորեն երկար է:

Կարևոր է նշել, որ ելնելով նախնական հայտորոշիչ թեստի նպատակից, արդյունքները վերլուծում է միայն ուսուցիչը, քանի որ նպատակ ունի ճիշտ պլանավորելու հետագա ուսուցման և ուսումնառության գործընթացը, ելնելով ստացված արդյունքներից: Նախնական հայտորոշիչ թեստը միավորով չի գնահատվում:

Բանավոր հարց ում կամ բաց հարցերով քննարկում

- Նախնական հայտորոշման մյուս ձևը բանավոր հարցումն է: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու մեխանիկորեն վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման, լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին:

- Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.
- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- մնացորդային գիտելիք,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն:

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ձևավորող գնահատման խնդիրն է ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը.

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը.

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:

Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) այլ:

Ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները:

Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ գնահատման նպատակն է ամբողջացնել թեմայի կամ նրա մի մասի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը: Ամփոփիչ գնահատումը ստուգում է ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը: Պարտադիր ամփոփիչ գնահատումով ստուգվում են հիմնական և միջնակարգ դպրոցի շրջանավարտի ուսումնական գործունեության արդյունքները: Ընթացիկ և ամփոփիչ գնահատումները դպրոցում կիրառվում են նաև սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որակավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

Սովորաբար գնահատումը ենթադրում է հետևյալ գործառույթները.

1. վերահսկման,
2. դաստիարակչական ,
3. ուսուցանող

Ժամանակակից մեկնաբանմամբ՝ գնահատման բոլոր գործառույթները կարելի է բաժանել երկու խմբի. Ուսուցչի համար գնահատումը պետք է իրականացնի՝

1. ախտորոշող
2. կանխատեսող,
3. նպատակադրող գործառույթներ:

Սովորողների համար կարելի է առանձնացնել գնահատման հետևյալ գործառույթները.

1. խթանող,
2. կողմնորոշող,
3. կարգավորող,
4. դաստիարակող,
5. վերաբերմունք դրսևորող,
6. սոցիալական:

3.

Գնահատման գործընթացի հիմնական գործող անձը, անշուշտ ուսուցիչն է, սակայն գնահատման արդյունքները կապվում են գլխավորապես սովորողների հետ, ուստի նրանց կարող ենք գնահատման գործընթացի ու արդյունքի հիմնական սպառողներ համարել: Ներկայումս ուսուցիչները գրեթե յուրաքանչյուր ուսումնական տարվա

սկզբին տարբեր առարկաների գծով գնահատման գործիքների նոր փաթեթներ են ստանում և պարտավոր են հասկանալ այդ միջոցների համապատասխանությունը, ուստի կարիք ունեն գնահատման ոլորտում հատուկ նախապատրաստության, քանի որ կրթության այս բնագավառը միակողմանի ու թերի է եղել: Այստեղ մենք նկատի ունենք խորհրդային դպրոցը, երբ գնահատման իմաստը բովանդակային գիտելիքների ծավալը որոշելն էր և այն աշակերտները, տեսական լավ պատրաստվածություն ունեին, համարվում էին լավագույները, սակայն իրական կյանքում նրանք շատ հաճախ անհաջողության էին մատնվում: Մինչդեռ ուրիշները, որ դպրոցում գնահատվելու հույս անգամ չունեին, շատ հաջողակ էին լինում հետագա կյանքում: Բազմաթիվ լավ ուսուցիչներ հասկանում էին, որ գնահատումը պետք է լինի բազմակողմ և ամբողջական՝ ներառելով ոչ միայն տեսական գիտելիքները, այլ նաև կարողությունները, ինչպիսիք են ճնշմանը դիմանալը, ինքնակառավարումը, վստահությունը սեփական ուժերին, սեփական դիրքորոշումն ու վերաբերմունքը որոշակի հարցերի նկատմամբ և այլն:

Ռ. Սթինգսը գրում է, որ << Ավագ սերնդի ներկայացուցիչների մեծ մասը մեծացել է այնպիսի դպրոցներում, որտեղ ուսուցիչները հավատացած էին, որ ուսումնառության առավել արդյունավետության հասնելու ուղին աշակերտների մտային անհանգստությունը մեծացնելն է>> [2, էջ180]: Նորագույն մանկավարժական մոտեցումներում ակնհայտ է մի նոր տեսակետ , ըստ որի սովորողների հաջողությանն առավելագույնս նպաստող դասավանդման կատարելագործմանն ուղղված որոշումները, ըստ էության, սովորողները չեն ընդունում: Ավելի կոնկրետ՝ ուսումնառության ընթացքում սովորողների հաջողությունը կամ ձախողումը պայմանավորող որոշումներն ընդունվում են հենց իրենց՝ սովորողների կողմից: Նրանք են որոշում՝ արժանի են արդյոք գիտելիքներն այն ջանքերին, որ գործադրվում են դրանց ձեռք բերման համար: Իրենք են որոշում՝ արդյոք իրենց բավարար չափով ունակ են համարում տվյալ դասը, նյութը, թեման սովորելու համար: Այստեղից կարելի է եզրակացնելիհետևյալը՝ սովորողները իրենք են պատասխանատու իրենց ուսումնառության համար: Եթե աշակերտները չեն ուզում սովորել կամ սովորելու ունակ չեն զգում իրենց, ուսումնառությունը չի կայանա: Ուստի կարևոր է դառնում այն հարցը, թե ինչպես կարող ենք օգնել սովորողներին, որ սովորեն, ինչպես օգնենք նրանց հասկանալ, որ իրենք կարող են սովորել:

Որպեսզի ուսուցիչը կարողանա գնահատումը նպատակին կատարել, նա պետք է՝

ա/ ստույգ տեղեկություններ հավաքի իր սովորողների ձեռքբերումների ու առաջադիմության մասին,

բ/ ոչ թե պարզապես գնահատական նշանակի, այլ մեծացնի աշակերտի սովորելու ցանկությունն ու բարձրացնի նրանց արդյունավետությունը,

գ/ հասկանա, թե որն է ձեռքբերումների, ուսումնական և անձնական հաջողությունների այն մակարդակը, որին ուզում են հասնել իր աշակերտները,

դ/ ճիշտ ընտրի գնահատման համապատասխան մեթոդները,

ե/ աշակերտներին քաջալերելու համար ճիշտ օգտագործի թե գնահատումը և թե նրա արդյունքները, որպեսզի վերջիններս կարողանան վստահել իրենց ուժերին և պայքարեն ուսման բարձր առաջադիմության և անձնական հաջողությունների համար:

1. Ուսուցիչները պետք է դասավանդման կատարելագործմանն ուղղված որոշումներին համապատասխանող գնահատման եղանակները ընտրելու հմտություն ունենան: Ծանոթ լինեն գնահատման տարբեր մեթոդների, որպեսզի կարողանան ընտրել իրենց ծրագրած նպատակներին լավագույնս համապատաս-խանողը:

2. Ուսուցիչները պետք է դասավանդման կատարելագործմանն ուղղված որոշումներին համապատասխանող գնահատման եղանակներ մշակելու հմտություններ ունենան [3, էջ 24]: Պետք է ընտրեն դասավանդման նպատակներին համապատասխանում մեթոդներ:

3. Ուսուցիչները պետք է գոյություն ունեցող և իրենց կողմից մշակված գնահատման մեթոդները կիրառելու, միավորները հաշվարկելու և արդյունքները մեկնաբանելու հմտություն ունենան:

4. Ուսուցիչները պետք է առանձին սովորողների մասին որոշումներ կայացնելիս, դասավանդումը ծրագրելիս, ուսումնական ծրագրեր մշակելիս և դպրոցում բարեփոխումներ կատարելիս գնահատման մեթոդներն օգտագործելու հմտություն ունենան:

5. Ուսուցիչները պետք է աշակերտների ինքնագնահատման վրա հիմնված ճշգրիտ գնահատականներ նշանակելու մեթոդիկա մշակելու հմտություն ունենա:

Գնահատականը կամ գնահատանիշը արտացոլում է ոչ միայն սոորողների մակարդակը, այլև ուսուցչի գնահատման կարողությունը: Ուսուցիչը պետք է կարողանա մշակել, կիրառել և բացահայտել տարբեր առաջադրանքների կատարման

ընթացքում գնահատումներից ձևավորվող միավորների հաշվարկման կարգը: Ուսուցիչները պետք է հասկանան և կարողանան հստակ ձևակերպել, բացատրել, թե ինչու են իրենց մշակված միավորները տրամաբանական, արդարացի ու անաչառ՝ միաժամանակ ընդունելով, որ այդ միավորներն արտացոլում են իրենց նախընտրություններն ու կարծիքը: Ուսուցիչները պետք է կարողանան խուսափել գնահատականի սխալ կիրառումից, օրինակ, գնահատականն իբրև պատժամիջոց օգտագործելուց: Ուսուցիչները պետք է գնահատման արդյունքների մասին սովորողների, ծնողների, ոչ մասնագետ անձանց, նաև այլ մանկավարժների հետ տեղեկատվություն փոխանակելու, քննարկելու, հաղորդակցվելու հմտություն ունենան :

Գնահատումն ըստ կազմակերպման ձևի իրականացվում է գրավոր և բանավոր: Այն կարող է լինել որակական և քանակական: Քանակական և որակական գնահատումը հաճախ զուգակցվում է: Գոյություն ունեն գնահատման մի շարք ձևեր՝ ընթացիկ գնահատում, միջանկյալ գնահատում, թեմատիկ գնահատում, պարբերական գնահատում, տարեկան գնահատում, ամփոփիչ գնահատում, ռուբրիկներ, ոչ խոսքային գնահատում, կրեդիտային միավորներով գնահատում, ռեյտինգային գնահատում, թղթապանակ, ինքնագնահատում: Գնահատման համար կարող են կիրառվել մի շարք միջոցներ կամ գործիքներ՝ հարցում, առաջադրանքի կատարում, հարցարան, թեստ, գնահատման սանդղակ, ուսումնական թղթապանակ, ստուգատես-ցուցադրություն և այլն:

Թեև ստուգման և գնահատման գործունեությունն այսօր բացառապես ուսուցչի իրավասությունն է, բայց հնարավոր է և անհրաժեշտ սովորողներին ընդգրկել իրենց աշխատանքի արդյունքները ստուգելու և գնահատելու գործում՝ նրանց ինքնաստուգման ու ինքնագնահատման չափանիշներ տալով [4, էջ 18]: Ինքնագնհատում անվանում են այն հատուկ գործողությունները, որոնց առարկան մարդու սեփական հատկություններն ու վիճակներն են՝ որպես գործունեության և շփման սուբյեկտ: Սովորողի համար ինքնագնահատումը կարևոր է բոլոր ուսումնական առարկաների ընթացքում: Ինքնագնահատումը իրականացվում է երեք փուլով՝ նախնական ինքնագնահատում, առաջադրանքի ինքնուրույն կատարում, ինքնուրույն աշխատանք: Նախնական ինքնագնահատումն արվում է առաջադրանքի կատարման սկզբում, այսինքն՝ կողմնորոշման փուլում: Սովորողը պետք է համոզվի , որ ճիշտ է

հասկացել ուսումնական խնդիրը, նպատակը, ուսուցչի պահանջները: Նա կարող է այդ անել ուսուցչին հարցեր տալով, ճշտելով առաջադրանքի պայմանները և նախնական տվյալները: Առաջադրանքի ինքնուրույն կատարման փուլում ցանկալի է, որ ուսուցիչը խրախուսի ընթացիկ ինքնահսկումը՝ հիշեցնելով, որ պետք է համեմատել միջանկյալ արդյունքները տրված օրինակի կամ տվյալների հետ, հետևել ժամանակին, վերջնական արդյունքին հասնելու համար համապատասխան միջոցներ ընտրել: Ինքնուրույն աշխատանքի եզրափակիչ փուլում կարևոր է ամփոփել, վերանայել և ստուգել ստացած արդյունքները:

,Ինքնագնահատման հմտության ձևավորման մյուս կարևոր պայմանը սովորողների ներգրավումն է փոխադարձ ստուգման և գնահատման տարբեր ձևերի մեջ: Դրանցից են գրավոր պատասխանների փոխադարձ ստուգումը և ամփոփիչ ինքնուրույն աշխատանքների ստուգումը{5, էջ 12}: Առաջինը նպատակահարմար է փոքրածավալ ինքնուրույն աշխատանքների ստուգման դեպքում: Նույն նստարանին նստած սովորողները փոխանակում են աշխատանքները և ստուգում դրանք: Ստուգման վերջում գրում են կարծիք: Երկրորդն իրականացվում է ամբողջ թեմայի ուսումնասիրումից հետո: Այս դեպքում կարելի է օգտվել դասագրքերից, աղյուսակներից, վերլուծականներից և այլն:

Գնահատումը պետք է խրախուսի աշակերտին, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին: Այն փաստը, որ սովորողը չի կարողանում լուծել խնդիրը, դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին: Ուսուցչի համար գնահատումը պետք է աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու միջոց լինի: Ծնողի համար այն պետք է երեխայի առաջընթացն արձանագրելու, ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց հանդիսանա:

Աշակերտի գիտելիքների, կարողությունների և դիրքորոշումների գնահատման կիրառվող մեթոդներից ու ձևերից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, իր առանձնահատկությունները: Բանավոր հարցման ժամանակ սովորողի պատասխանի որակը ստուգվում է բանավոր հարցման արդեն կիրառվող

չափորոշչային պահանջների հիման վրա: Խնդիրն այստեղ այն է, թե ինչպիսի՞ վարպետությամբ է ուսուցիչը կիրառում բանավոր հարցման մեկից - տասը բալային համակարգին ներկայացվող չափորոշչային պահանջները, կարողանում է նա արդյո՞ք ընկալել և տարբերակել օրինակ՝ 'ութ' կամ 'ինն' նիշերի չափորոշչային տարբերությունները, ու՞մ կարող է նշանակել բանավոր հարցման չափորոշչին համապատասխան գնահատական, կամ այլ կերպ ասած ի՞նչպես է ուսուցիչը ապահովում գնահատման օբյեկտիվությունը՝ ըստ բանավոր հարցման չափորոշիչների: Սակայն սովորողների աշխատանքների գնահատումը կարող է բարդանալ, եթե ուսուցիչը ցանկանա այն իրականացնել կրթության բովանդակության բաղկացուցիչ մասերը՝ գիտելիք, հմտություն, և արժեքային համակարգի միասնության մեջ:

Եզրակացություն

Ամփոփելով վերը ասվածը՝ առանձնացնենք հետևյալ դրույթները.

1.Սովորողների գիտելիքների գնահատումը սկսվում է կրթական արժեքները սահմանելուց: Գնահատման արդյունավետ կիրառումը սկսվում է նրանով, որ նախ սահմանում ենք առարկայական չափորոշիչներին համապատասխան գիտելիքները, ապա փորձում ենք հասնել դրանց կատարմանը: Ընդ որում, կրթական արժեքները ներառում են ոչ միայն այն, ինչ մենք ցանկանում ենք գնահատել, այլև գնահատման եղանակներն ու միջոցները:

2.Գնահատումը արդյունավետ է, եթե այն միասնական գործընթաց է, որի արդյունքները տեսնելու համար ժամանակ է պահանջվում: Ուսումնառությունը ներառում է ոչ միայն սովորողի գիտելիքներն ու կարողությունները, այլ նաև արժեքները, վերաբերմունքը, սովորությունները, որոնք անդրադառնում են թե դասարանում, և թե դասարանից դուրս նրա հաջողությունների վրա: Գնահատումը պետք է արտացոլի այդ ամենը:

3.Գնահատումն ավելի արդյունավետ և հաջող է, երբ նպատակները հստակ են սահմանված: Գնահատման նպատակն է աշակերտի առաջադիմությունը համեմատել կրթության նպատակների և ակնկալիքների հետ, որոնք էլ իրենց հերթին բխում են ուսումնական հաստատության ուղղվածությունից, կրթության բովանդակության առանձնահատկություններից:

4.Գնահատումը դրական արդյունք է տալիս, եթե այն շարունակական է:

5.Գնահատումը դրական փոփոխությունների է բերում, քանի որ շեշտը դնում է օգտակարության, ոչ թե այնպիսի հարցերի վրա, որոնք մարդկանց առանձնապես չեն հետաքրքրում:

6.Գնահատման միջոցով ուսուցիչները իրականացնում են սովորողների՝ հասարակության նկատմամբ իրենց պարտականությունները:

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գնահատման համակարգը , տեսակները և ուսուցչի մոտեցումները
3. Գնահատման մեթոդները և տեսակները
4. Գնահատման տեսակները ըստ նպատակի
5. Նախնական հայտորոշիչ թեստի առանձնահատկությունները
6. Բանավոր հարցում կամ բաց հարցերով քննարկում
7. Եզրակացություն

Գրականություն

1. Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975թ., էջ 74:

3. Վ. Ա. Սուխոմլինսկի, 'Հարյուր խորհուրդ ուսուցչին', Ե. 1980թ. 157 էջ

4. Օ. Ս. Միքայելյան, Ս. Օ. Միքայելյան, Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2010,

5. Болотов В. А. Виды и назначение программ оценки результатов обучения школьников. Педагогика. 2013.N8с 15-26.

2. Վարդումյան Ս., Հարությունյան Լ. և ուրիշներ, <<Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար>>, Երևան, 2007թ., էջ 180: